

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ղր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6

ՓԻԻԿՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ


ՇԱԲԱԹ 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 32

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիլեզիբձի)



Դ

Յօդուածները. Բարեկամները. Զուգակշիռ մը. Վերադարձը Կ. Պոլիս.

Ուսուցիչ ու Թղթակից:

(Շաբ. Իթ. քիւէն)

Համակրանքն երթալով աճեցաւ ու հայ հրապարակագրին անունն ու յօդուածները Բարեկի գրական ու քաղաքական շրջանակներուն մէջ բերնէ բերան կը պտրտէին: Օր մը, Ռուսաշէնայ փողոցին Համալսարանը զանի հրատարակեց բանախօսել Արևելքի խնդիրներուն վրայ:

Հո՛ն, անդրանիկ բանախօսութիւնն ըրաւ 1893 Մայիսի 24ին, երբ դեռ 23 տարուան էր: Երիտասարդ ատենաբանը իր թովիչ ու յանկուցիչ խօսքերուն

հրապոյրին տակ պահեց երկար ատեն, հոն խոնամ փայլուն երկսեռ խումբը հանգիստականներուն, որոց ուշը դարձուց դէպ ՚ի պատմութիւնն ու բարքերն իր ճառած երկրին:

Այնուհետև Կարապետ Պիլեզիբձի սկսաւ ընդարձակել իր յարաբերութիւնները:

Վեհ կեցուածք, վայելուչ շարժուածք, հեզիկ ու անյողգողգ նայուածք, լուրջ ու դիւթիչ խօսուածք. մէկ բառով, գեղեցիկ արտաքին մը, դերազանցօրէն զգայուն սրտի ու պաշտելի հանճարի արտայայտութեան մը հետ խառնուած, հիանալի նկարագիր մը կը կազմէին անոր մէջ ու համակրելի կընէին զանի ամենուն. և որովհետև վեց լեզու գիտէր, կը խօսէր ու կը գրէր — հայերէն, ֆրանսերէն, յունարէն, անգլիերէն, գերմաներէն ու թուրքերէն —, նեղութիւն չ'էր կրեր երգէք ընկերութեան ազնուագոյն խաւերուն հետ շփուելու: Արուարձանին (Faubourg 1) սրահներուն

(1) Բարձր դասակարգին քաղոք:

մէջ նկատուած էր հմտութեան ու ազնուականութեան զարդ մը, արևելքի երկինքէն հոսող անուշ ճառագայթում մը:

Իր բարեկամներուն մէջ կը հաշուէր մեծանուն մարդիկ, որոնց մէջէն կը յիշենք մէկ քանինները. Ժան Թինո, Մօրիս Պառէս, Էմիլ Զօլա, Տրնի Բօշէն, Ժան Ժօրէս, Միլվուա, Էն: Այս թանկագին բարեկամներուն մէջէն թերևս ամենասիրելին Մօրիս Պառէս յաճախ կը կրկնէր թէ՛ «Գեղեցկութեան ու բանաստեղծութեան անբաղդաստեղի աղբիւր մը» կը նկատէր Կարապետը:

Սակայն, տարաբաղդ բանաստեղծը, իր փառքի ճառագայթումին մէջ իսկ սկսաւ զգալ ճնշումը տառապանքին ուղիղ համեմատութեամբ մ'աւելցած՝ ակամայ ծախքերուն հետ, զորս ստիպուած էր ինք ընել, երբէք չը մատնելու համար իր նիւթական սեղմ ու սահմանափակ պայմաններն ու պահելու համար իր բարձր դիրքը, գրական թէ քաղաքական հոյակապ աշխարհին ընկերութեանը մէջ:

Ու եղան օրեր, 1893ին մանաւանդ, ուր Կարապետ, թշուառութեան հետ դէմ առ դէմ, գերագոյն կռիւր կը մղէր, ու այդ յուսահատութեան վսեմ ճգնաժամուն՝ ինքնասպանութիւնն իրեն կը թուէր գեղեցկագոյն միջոց մը փրկութեան. ա՛յնքան ծանր էին ու ա՛յնքան ահռելի՝ իր նիւթական տառապանքները... Հաւաստողներ կան թէ՛ անի յօդուածներ ունի քաղաքական, զորս խմբագրած է խուցի մը մէջ քաշուած, քաղցի դաւարումներուն ու ցուրտի սարսուռներուն տպաւորութեանը տակ:

Բարիզի անդուծ ու անտարբեր միջավայրին բոլոր սոսկումն ու բոլոր նողկանքը բերենք դնենք Վենետիկի ամօքիչ ու մոգական մթնոլորտին բոլոր գուրգուրանքին քով. մայրաքաղաքին խլացնող ժխորն ու կղզեակի մը

խաղաղաւէտ միայնութիւնը բերենք աչքի առաջ, ու պիտի ունենանք ազօտ գաղափար մը բնութեան ու պայմաններուն վրայ երկու տեսակ գործիչներուն, Տիգրան Երկաթին ու Մխիթարեանց, առաջինը զրկանքի ու տառապանքի փուշերուն մէջէն բանալով իրեն ճամբան, իսկ վերջինները վարդերու բուրմունքներով արբշիւ՝ երգելով շիջելափառ անցեալը Հայրենիքին: Տիգրան՝ գեռածուխ աւերակներու մոխիրովն ու նոր նահատակներուն շերտեր արիւնովը բազազրելով իր բոլորը. Մխիթարեանք՝ անցեալի փոշիներէն ու բեկորներէն հաւաքելով իրենց գրական ու ազգային կառոյցին ատաղձները:

Մխիթարեանք՝ մէկէ աւելի պատկառելի կտակներէ գոյացած ու դարերու տնտեսութեամբ բազմապատկուած հասոյթներու վրայ բաղմած, զերծ՝ ընտանեկան ու ընկերական ճնշող ու խեղդող պայմաններէն, մենակեցութեան երանաւէտ անդորրութեանը ծոցիկն օրօրուելով, աղօթելով ու նուագելով, գրելով ու տպագրելով, վերջերս ալ անմեղ ու բանաւոր փառասիրութեան մը հեշտանքով սօճելով իրենց հիմնարկութեան երկերիւրամեակը՝ Հայութեան յարգանքը կը վայելեն: Իսկ Տիգրան Երկաթ՝ Թուրքիոյ սնանկութեան հետեւանքով քանդուած վաղեմի աղնիւ գերդաստանի մը տարագիր զուակը, զուրկ՝ գոյութեան տարրական միջոցներէն, հոգեբանական ահռելի կացութեան մը մէջ, գրելով ու խօսելով, վիճելով ու մաքառելով, պաշտպանեց իր ցեղին Մեծ Դատը, պարզեց ներկային Սարսափը, պահանջեց Եւրոպայէն, քաղաքակիրթ Մարդկութենէն՝ տանելի կացութիւն մը Հայաստանին համար, որուն աղատագրութեան երազովը սնաւ: Վերջապէս ներկային՝ ոչ թէ անցեալին Մարդն եղաւ Տիգրան

Երկաթ, ու Ապագային Մարդը պիտի ըլլար, եթէ ապրէր:

Այսպէս, բազմի հակահարուածին տակ, որոշեց վերագառնալ ծննդավայրը, ընտանիքին քով, որ ահագին կորուստներ տուած էր օսմ. կայսրութեան մէջ տիրող անիշխանութեան հետեւան ըով:

«Revue des Revues»ի մէջ այս տողերով կը բացատրուի Կարապետի վերագարձը Կ. Պոլիս:

«Կեանքը, սակայն, կը դժուարանայ իրեն հանար: Իր ընտանիքին մահադատութեանց պատճառով, հետեւանք սեփական սագնայիս 'ի Թուրքիա, Կարապետ կը տեսնէ որ ինք իր գրչով ապրելու դասապարտուած է: Կը ճանչնայ այսպէս գերագոյն անյուստութեան ժամերը, որոնք, առաջ, աղետաբեր հակահարուած մը տուի իր առողջութեան: Գոյութեան դժուարութեանց դէմ մղած կռուին մէջ կ'ըստիպուի ինքուր ընդհանր Բարիքը, երջանիս այն պահուն ուր փառքը կ'սկսէր ժայտի իրեն, «Revue des Revues»ի մէջ շարք մը յօդուածներու հրատարակութեամբ:»

Կ. Պոլիս իր վերագարձը, 1893 Գեղեցիկներին, կ'ողջունուի համակիր ընդունելութեամբ քրիստոնեայ թէ մահմետական աշխարհին կողմէն: Շատ ժամանակ չ'անցնիր, Փրանսայի պատմութեան ուսուցիչ կը կարգուի Կ. Պոլսոյ թուրք վարժարանի մը մէջ. ու այսպէս, իր յարաբերութիւնները հին մահմետական աշխարհին հետ կը թոյլատրեն իրեն թափանցել թուրք հոգին և մտէն հետեւիլ ընկերային, քաղաքական ու մտաւորական շարժման 'ի Թուրքիա: Հետզհետէ Արեւելքի վրայ առաջնակարգ ուսումնասիրութիւններ կը զրկէ «Revue des Revues»ի, որուն թղթակիցն էր: Միևնոյն ժամանակ կ'աշխատակցի Կ. Պոլսոյ

«Հայրենիք»ին (Մելիքեանինը չը հասկըցուի):

Ահա՛ շարքը յօդուածներուն, որոնք հրատարակուեցան յիշեալ ժողովրդական թերթին մէջ, որ յետոյ, արիւնոտ դէպքերուն ատեն խափանուեցաւ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԻՆԵՐ 1895 Յունիս 17, Յուլիս 8, 26, Օգոստ. 13, (թ. 1192, 1213, 1231, 1249) 1896 Յունիս 16, 23 (թ. 1391, 1398)

ԿՆՈՋ ԴԵՐԸ. 1896 Յուլիսի 20 (թ. 1395)

ԱՔԻԼԼԷՍ ԲԱՐՍԱՔՈՍ. 1896 Յուլիսի 7 (թ. 1412)

ՄԵՐ ԿԱՊԻԿՆԵՐՆ ՈՒ ԹՈՒԹԱԿՆԵՐԸ. 1895 Մայիս 10 (թ. 1165)


ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՈՎԻՉ, ԼԷՀԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԸ, 1895 Մարտ 5 (թ. 1102)

Այս յօդուածները հիացումը խլեցին ընթերցողներուն, որոնք չ'էին ճանչնար հեղինակը, որ կ'ստորագրէր Կարապետ, Միր-Կարո:

Մանկական հոգիներուն մէջ կը յանձնարարէ բարոյական ճշմարիտ բարձրութեան համապատասխանող դաստիարակութիւն մը, ու ասով ցոյց կուտայ իր մէջ Բարիին ու Կատարեալին սէրը, յառաջդիմելու անզուսպ տենչը, կը ներշնչէ իր հայրենակիցներուն միջոցներ այդ բարձունքը թեւակոխելու, անկախ ու լուսամիտ զաւակներ պատրաստելով:

Ս. ԲԻՒՐՍ

ՔՐՈՆԻԿ



Ա. ԶԳԱՅԻՆ

Լ'ետրքեհեկ կը քարգմանեմք.

— Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ՄԻՉԱԴԵՊԸ. — Վերջերս Բ. Իրան կողմէն

իր արտասահմանի դեպքաններուն ուղ-
ղուած շրջաբերականի մը համեմատ,
իրը թէ հայաւազակախումբ մը Առաջի
վանքին մէջ փակած բանտարկած է
60ի չափ կին ու տղայ. Մշոյ եպիսկո-
պոսին ինդրանքին վրայ, թուրք զօ-
րազնդերը փորձեր են ազատելու (°)
գերիններն ու հրացանի գնտակներով
ողջունուած են եղեր: Միւս կողմէ,
Կ. Պոլսոյ վերջին հեռագիրները կ'ի-
մացնեն թէ՛ արիւնհեղութենէ խոր-
շելու համար (°) թուրք կառավարու-
թիւնը հայոց Պատրիարքարանին աղա-
չած է միջամտել և Անդրանիկի ու իր
խումբին կեանքը կ'առաջարկէ ազատ
թողուլ պայմանով ոչ անոնք օսման-
եան հողէն դուրս ելնեն:

Թրքական ծանուցագիրը համա-
ձայն չ'է ճշմարտութեան: Քանի մը
սրբագրութիւններ ու լրացուցիչ ման-
րամանութիւններ աւելի լաւ պիտի
հասկցնեն Սուլթանին անսովոր քաղց-
րութիւնը:

Ս. Առաջեղոց վանքը Մշոյ հա-
րաւէն քանի մը մզոն հեռու կը գրտ-
նուի, ռազմանպաստ ընտիր գիրքի մը
մէջ, բարձունքի մը վրայ որ կը տիրէ
Սասնոյ լեռնոտ գիւղերը տանող կիր-
ճերուն վրայ. պարսպուած է բժրդով
մը, կը պարունակէ որբանոց մը, ուր կը
խնամուին ու կը դաստիարակուին 60
որբեր, թրքական ծանուցագրին ըսած
60 գերինները:

Հոկտեմբերէն ի վեր, Պիթիզի
վալին տեղեկացաւ որ հայ յեղափոխա-
կաններ Քեսայի (որոնք իրենց կեան-
քը կը վտանգեն) ապաստանած էին
Ս. Առաքելոց վանքը, շուտով միտքը
դրաւ վանքը ռմբակոծել: Բայց ետ
կեցաւ, ռուսական հիւպատոս Թումա-
նսքիի աղդարարութեանց վրայ: Խու-
զարկութիւններ ընելու համար զրկուած
զօրքերը բնաւ հետք մը չ'գտան կար-
ծեցեալ ապաստանեալներէն:

Սակայն Օտմ. իշխանութիւնները

կարծեցին օգտուիլ առկթէն՝ Ս. Առա-
քելոց վանքին մէջ պահականոց մը
հաստատելու համար. ասիկայ շատ լաւ
կը համաձայնէր Սաւունցի գիւղացիներ-
ըր ցրուելու ծրագրին, զորոնք, բռնի
թէ համոզելով, կ'ուղուի բերել ձգել
Մշոյ դաշտին մէջ ուր իրենց անկարե-
լի պիտի ըլլար ինքնապաշտպանու-
թիւն կանսնաւոր բանակին դէմ:

Այն ատենն է որ Անդրանիկ իր
մաշգիկներով կը նետուի վանքին
մէջ:

Հայ Քեսայիները, պաշտօնական
վկայաթղթոց մէջ առաջակ յորջորշու-
ած, նման են Սերպ ու Պուլիար հայ-
դուկներուն, հելլենական անկախու-
թեան առմաստներուն: Անդրանիկի
ընկերացողները կը վերաբերին Սերո-
բի խմբին, Սերոբ քաշայի, այսպէս
կոչուած, որ 7 տարի շարունակ կուռե-
ցաւ ու դաւով մը սպաննուեցաւ:

Ստոյգ չէ թէ Անդրանիկ ընդունի
թրքական առաջարկները. այսպիսի
պարագաներու մէջ բռնաբարուեցան
ամեն եղած խոստումներ. ասկէ զատ,
եթէ հեռանար, արիւնահեղ յարձա-
կումներ պիտի գործուին ապահովա-
պէս դրացի գիւղերու ընակիչներուն
վրայ, որովհետև կայսերական գթու-
թիւնը սովորաբար չը գործադրուիր
զինաթափ անձերու նկատմամբ:

— ԳԵՐ. Տ. ՅՈՎՍԷՓ ԵՊ. ԱՅՎԱԶ-
ԵԱՆ ասեցէ մ'ի վեր կը տառապի մի-
գարգելութեան: Այս հիւանդութեան
հետեւանով է որ կը յետաձգուին միւ-
յե ցարդ ընտրական գործողութիւն-
ները: Հաւաստի աղբիւրներէ կ'իմա-
նանք թէ Առժ. Թաղ. Խարհուրդը լու-
ծուած է եւ թէ՛ Խարհուրդին գրագիրը,
Տ. Լեւոն Մկրտիչեան, որ «Փիւնիկ»ի
ընթերցողներուն լաւ ծանօթ է, վեր-
ջապէս դադրած է պաշտօնէն:

— ՄԱՐՍՇԷՆ հասած այս Եաբ-
թուան թղթակցութեան մը մէջ ցաւօք
արտի կը կարգանք թէ՛ սպաննութիւն-

ներն ամեն որ կր յանախեն, քանի մը
օրուան մէջ միայն 15 Հայ սպաննուած
են ու մարդասպաններ, բալորն ալ
Թուրք, ցարդ անպատիւ կր մնան. կա-
ռավարութեան գիտութեամբ ու մաս-
նակցութեամբ կր գործուին այս ոնիր-
ները: Անիւստութիւնը կիսարեալ է:

— ՄՈՒՆԵՆ կը ծանուցուի, կ'ըսէ
պոլսական 12 դեկտ. թուով հեռա-
գիր մը, թէ՛ հրոսպետ Անդրանիկ եւ
իր խումբը կտրեցին անցան գիրեմի պա-
շարդ թուրք զօրագնորուն շրջայն-
գիծը ու լեռ ելան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

— ԱՀՄԵՏ ՐԻՉՍ, ընդարձակ յօդ-
ուածով մը, զոր հրատարակած է
Կրանտ Ռեյֆի, դեկտեմբերի թիւին
մէջ, խօսելէ յետոյ Արևելքի մէջ ֆրան-
սական քաղաքականութեան վրայ, իր
մասնաւոր գաղափարները կը յայտնէ
Թուրքիոյ պատմական բնաշրջումին
վրայ՝ Եւրոպայի մասնաւորապէս Գրան-
սայի հետ իր ունեցած յարաբերու-
թեանց մէջ, այս յարաբերութեանց
արդի կացութեան ու Թուրքիոյ հնա-
րաւոր ապագային վրայ. բարենո-
րոգման ու վերականգնումի թուակա-
նով մը որուն գլխաւոր բացողը Գրան-
սան կրնար ու պարտէր ըլլալ:

Սակայն այս յօդուածին մէջ,
Ահմէտ Րիզա, նշաւակելով հանդերձ
Եւրոպայի դձուձ ու նիւթապաշտ քա-
ղաքականութիւնն ու սղբալէ յետոյ
անոր աղետալի հեռանքները, ընկե-
րային ու քաղաքական կարգի խնդիր-
ներ յուղելու ելնելով՝ գլորուեր ինկեր
է նոյն ստիպակութեան մէջ, որ յա-
տուկ է Թուրք խմորին:

Այս կարծեցեալ ազատամիտը կը
պատուէ իսլամութիւնը պատող կե-
ղեք, դուրս կը նետուի, ու, վախնա-
լով որ չըլլայ թէ Եւրոպան Հայերուս
ի նպատակ մասնաւոր կարգադրութեան
մը քաղաքականութեան ուժ տայ, կը
փութայ մասնանկ ընել մասնակի բա-
րենորդումներու վրասնէն ու աղէտ-

ները, ջառագովելով ընդհանուր բա-
րենորդումներու հարցը, որմէ միայն
կախում աւնի, կըսէ, մահամերձ կայս-
ր. լթեան մը բժշկուելը: Թուրքիան
կըսէ, մտաւորական տեսակետով, շայ-
նօրէն օգտուեցաւ Մուստաֆայի գրական
ու գեղարուեստական հարստութեանց ու
գաղափարներուն շարժումէն, բայց,
ֆաշիստական ու անտեսական տեսակե-
տով, Մուստաֆայի Թուրքիոյ բարեկարգ
կ'ըսուեր, անոր հետ միշտ թշնամի
պես վարուեցաւ. Թուրքիոյ պատերազմը
միակ բացառութիւնն է:

Անկէս Րիզայի շիզերուն կը դպչի
երբ կը լսէ թէ՛ Գրանսան եկեղեցիին
անդրանիկ դուստրը կը կոչուի փոխա-
նակ կոչուելու Դուստրը Մեծ Յեղափո-
խութեան: Միապետական Գրանսան
աւելի ազա սական ու աւելի յառաջդի-
մասէր կը գտնէ քան հանրապետա-
կանը ու այսպէս կը վերջացնէ:

« Ժողովուրդի մը բարի համբաւը
կ'աւելնայ ու կը պահպանուի լոկ ծա-
ռայութիւններով զորս կը մատուցանէ
ուրիշ բարեկամ ժողովուրդներու: Արդ,
Թուրքիան գարաւոր բարեկամուհի մ'է
Գրանսային. իր բարեկամութիւնը դա-
րեք առաջ կը նախորդէ պայմանադրու-
թեանց, զոր այնքան տխրօրէն կը գոր-
ծածեն ի շարն: Թուրքերն իրաւունք
ունին ուրեմն աւելէ սպասելու այսօր
արգարութեան ու ազատական և մարդ-
կային գաղափարներուն աւելի համա-
ձայն քաղաքականութիւն մը »:

— ԹՈՒՐԿ ԹՂԹՍՍՈՒՄՍՈՒՄՆՆ վարչու-
թիւնը ծանուցագիր մը հրատարակեց
յայտարարելով թէ՛ այսուհետեւ չ'պիտի
ընդունի գօց նախակներ եւ թէ՛ Կ. Պո-
լիս ուղղուած ամեն թղթակցութիւն
պէտ է ըլլայ գնոր յօսքայով:

Քննարկան է թէ՛ ասիկայ կը վե-
րաբերի լոկ թուրք թղթատարութեանց,
նչ թէ միջազգային թղթատարական
տուներուն:

-- ԵՐԼՏԸՁ ՔԷՕՇՔԻ մէջ վերջերս

ծագած հրդեհին վրայ ամիսներով կասարուած գաղտնի հարցախնուութիւնները վերջապէս երեւան հանեցին շատ մը պալատական պաշտօնեաներու մասնակցութիւնը դաւադրութեան մը, որուն հետեւանով Սուլթանին կիներէն մին ամսորուած էր արդէն: Հիմայ կը հեռագրուի թէ՛ այս առթիւ այս շաբթուան մէջ 300 է անելի Թուրքեր ձեռքակալուեցան, որոնց մէջն է մեծահամբաւ գիտունը Միսրէտանի Իմէր պէյ:

— ՄԵԾ-ԵՊԱՐՔՈՍԻՆ զիրքը, կ'ըսէ 13 ներկայ թուով պոլսական հեռագիր մը, երթալով կ'ամբաստանուի: Առջի օրը, Սուլթանը զանի խորհրդակցութեան բռնեց ամբողջ երկու ժամ, բան մը՝ որ երկար ատենէ ի վեր տեղի չէ ունեցած:

— Ս. ԳԵՐԵՉՄԱՆԻ յունա-լասին միջադէպը կարգադրուեցաւ ի նպաստ Լասիններուն որոնք, առաջուան պէս իրաւունք պիտի ունենան ալելու: Յոյն յանցաւորներէն երկուքը ձերբակալուած են ու պիտի պատժուին սպաննուած մէկ Ֆրանչիսկեանին ու միւս 13 վիւաորուածներուն համար:

— Կ. ՊՈԼՍՈՅ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԵՍՊԱՆՍՏՈՒՆԸ կանխաւ կը զեկուցաւէ Դրան թէ՛ Ռազմական տուգանքի մասնաւոր վնարումը, որուն պայմանօրը կը լրանայ 1902 Փետրուար 14ին, պէտք է հեղիւ գործադրուի: Այս մասնավարը կը կազմէ 350,000 օսմ. ոսկիի գումար մը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Գահիրէ, 9 Դեկտեմբեր 1901

... Խմբագիր,

Քաղաքիս Գաւառ. Ընդհ. Ժողովը պիտի գումարուի, եթէ Ս. Նախագահը իւր անձի դէմ ուղղուած կծու բայց անկեղծ դիտողութիւններէն ազդուելով

իւր պաշտօնին գիտակցութեամբը ձեռք առնէ այնպիսի միջոցներ որ անկարելի դառնայ նիստին յետաձգումը. եթէ վսեմ. Ա.տենապետ Բաւան վերջացնէ իր Ապասիներուն այցելութիւններն ու վերին Եգիպտոսի ուղեւորութենէն վերադառնայ. եթէ մեր յարգելի Երեսփոխանները ժողովրդէն ստացած mandat նին չէզոքութիւն չը նկատեն. ու եթէ Քաղ. Ժողովն իր տասնամեայ տեղեկագրին խմբագրութեան վերջակէտը դնէ. եթէ...

Արդեօք Գալստեան վարժարանին ատեսեալ բարեկարգութենէն է որ բազմաթիւ ծնողներ գունգունդ օտար դրացներ զրկել սկսան իրենց զաւակները. ու արդի տխուր պատկերը մերառջեւ դրնելու համար կսակած էր երջանկայիշատակ վանեցին իր պատկառելի հարստութիւնը... 70 Եգիպ. ոսկի ամսական եկամուտով օժտելով մեր կրթական հաստատութիւնը. գէթ անմահ Գաւառացի կսակարարին խնկելի յիշատակը իրան լինէր մեզի՝ այդ անսպառ միջոցով մեր միակ ազգ. դպրոցին տալու այն զիրքը, — որուն իրաւամբ արժանի է — եւ զոր ունին մեր բթին տակ, ուրիշ օտար համանման հաստատութիւնները. այն ատեն չէ՞ր կարելի տէր ըլլալ Միջնակարգ վարժարանի մը, որուն ընթացաւարտները՝ Եգիպտական 'Baccalauréat'ն ձեռքերին իրենց առջեւ բաց պիտի գտնէին բոլոր բարձրագոյն վարժարաններն ու մասնագիտարանները... (1)

Գոհ ըլլանք որ մեր Քաղ. Ժողովը գոնէ ամեն ուրբաթ կանոնաւոր նիստեր կ'ընէ հետազօտելու... Լեզուներու խնամութիւնները եւ Երեսփ. Ժողովին զրկելու վարժուհիական խնդիր մը,

(1) Արգոյ քղրակիցը Գահիրէի Գալստեան վարժարանին վրայ թող չը ծանրանայ. անգամ մ'ալ հոս թող իջնէ տեսնէ մեր Պոլսուտեան երկ. վարժարանին կացութիւնը...
Ծ. Խ.

որուն ցարդ անլոյծ մնալը՝ նոյն ժողովին ապիկարութեան ապացոյցն է:

Անցեալները բարեկամ մը կ'ըսէր ինծի:

Ինչո՞ւր պէտք ազգային գործերը. ահաւասիկ դուն քեզի թշնամիներ ստեղծեցիր. այնչ որ ազգ. Մարտիկն մը կախուռ չունիս, հակառակ դեպքում անօրի կը չափջիտիր Գանիրիի փողոցները: ԱՆԱՄԱԼԻՆԵՐՈՒ ԵՒԻՐՈՒՆ զՈ՞ՒՆ ԵՂԱՐ Ա.Գ. ՎԱՐՋ. գործերը քննարասող...

Բաւական պերճախօս է այս կերպը մտածելու, բայց ի՞նչ օգուտ, ո՞ր սիրտ կրնայ հանդուրժել իրերու կացութիւնը:

Հոս, Գանիրիի հայ երիտասարդութիւնը, մեծ մասամբ, մի երգ ունի միայն. գիրար բամբասել, ու, ի հարկին, ապսակել ու կռուիներով իրարու խօսք հասկցնել:

Ապսակներու անախորժ միջադէպը դեռ իր բարձրութիւնը չը կորուսած՝ անցած երկու քառօրի օրը, Ս. Աստուածածնայ Եկեղեցիին շրջափակէն ներս, քահանայից յասկացեալ խուցերուն մէջ սեղի կուներայ անելի հրահանգող ու դրդողն անցք մը, որուն մէջ գաւազանը կ'ունենայ իր յասուկ սեղն ու նշանակութիւնը, «Արեւոյն»ի խմբագիր (*) Տիրացու Եղիշէ Թորոսեանի գլխուն վրայ...:

Սակայն, այդ ժամուր ու միանգամայն ծաղրաւարժ միջադէպին աղտոտ կողմերովը չը պիտի ուզէի գրաւել «Փիւնիկ»ի սուղ ու մաքուր սիւնակները. արգահասանք կ'զգամ լոկ դէպ ի այդ ինքնակոչ հրապարակագիրը, որ էլ եր— ո՞վ անբաւ բարութիւն — հանրութեան ծառայելու դերն ստանձնե՞ր է, իր թերթին մէջ դնելով մանրամասնութիւններն իր անհասի գգուրսովներուն:

Քանի որ ազատ երկիր կ'ապրինք, գիտնանք մեզ շնորհուած ազատութեան յարգը. եթէ իրօք, ու եւ է հրատարակութեան կամ խնդրի առթիւ յիշուած ենք իրարու, քաջ լինինք, պատուաւոր

գործենք, քաղաքակալիքը ազգերէն առնենք օրինակ. մութին մէջ գործելը վասուրիւն է...:

ԽԱՉՈ-ՉԱՆ

— Ուրախութեամբ կ'աւետենք թէ ՀԱՅ ՆՈՒՍ.Գ.Ս.ԾՈՒՍ.Յ ԽՈՒՄԲԸ յառաջիկայ Ամանորին առթիւ պիտի լսեցնէ քաղաքիս հրապարակներուն վրայ հայկական եղանակներ, որոնց այնքան կարօք կը քաշենք: Իսպաղի ուսուցչին քով իրենց դասընթացքը կը շարունակեն միտ: Ապրի՛ն մեր կամքի սէր ու եռանդուն երիտասարդներ:

Ա. Զ. Դ.

Ա.Ղ.Ե.ՔՍԱՆԴԻՒՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐՍԱՆ-ԼՍԱՐՍԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ ի նպաստ Հաստատութեան կազմուած վիճակահանութիւնը պիտի քաշուի առաջիկայ 1902 տարւոյ յունուարի 5ին (Ն. Տ) կիրակի օրը, երեկոյեան ժամը 4 ին, նոյն Հաստատութեան սրահին մէջ:


Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂՔԱՐՔ

ԿԱՇԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉՔ
Tapissiers en meubles

Քաղաքիս երեւելի հայ տուններուն ծանօթ յանախորդ, կը պատրաստեն գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, եւն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել, Աղղարիկ, Ռիւել-էլ-Չահապի,



«ԳԵՂՈՒՆԻ»



«ԳԵՂՈՒՆԻ» կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ :

Տարեկան Բաժնեգրինն է 3 Ֆրանկ 1 րբ. 50 կապէկ :

Թերթէս գոյացած մաքուր հասոյթին կէտը առանց կրօնի խտրութեան, կը յատկացնենք Ազգիս Որբիկներուն :

Ապառիկ բաժանորդագրութիւն բացարձակապէս չընդունուիր. Գինը կանխիկ է :

Բաժնեգրին, նամակ, եւ այլն, Ողջակի հետեւեալ հասցէին յղելու է

«PAZMAVEB»

S^t. LAZARE VENISE (ITALIE)



ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք ընդ ընդ տարւել եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղորայք, սրեսիալիքներ եւ հանքային թարմ շուրեղ :

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին :

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու վարձ մանկաբարձներ :



SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Դետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու գէմ.

Դիւրամառչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Դործակալ եւ Լիսպոն-Փոխասնորդ

ՄԻՀՐԱՆ ԴԱԼՅԱՆՍ

Աղեֆասնորիս, պզտիկ Մեկնիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ